ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒՆԻՍ 1, 1894 ԹԻՒ 9

WIEN

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. New York, N. Y. Vol. IV, 1894

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կոնդակ Վեհ. Հայրիկի առ Ռուսահայս — Խելօք և Անխելք Մարդիկ. — Կ. Թումայեան և Արհաւիրք Թրքական բանտից. — Պատասխան առ Հնչակ. — Ինչ Բան է որ Մեզ կը պակսի. Նամակ Կովկասէ. — Անմիաբանութիւն Հայոց(°) — Մազ. — Արաքս. — Նամակ Պոսթոնէ. — Հայ գործաւորներ կը հալածուին — Տեղական և այլ և այլ Լուրեր.

ՀԱՅՔի նոր հասցէն է
139 West 22nd St. New York

ՄԱՔՍՈՒՏ ՍԻՄՈՆ ՄԱՀԱՄԵՐՁ ՎԻՐԱՒՈՐԵԱԼ

Կ. Պոլսէն 23 Մայիսին կը հեռագրեն թէ Մաքսուտ Սիմոն Պէյ գիշերանց իւր բնակարանին մէջ յարձակում կրեր է զինեալ երեք Հայերէ որք վիրաւորեր և իբր մեռեալ թողեր են զինքն : Դոցա երկուքն ձերբակալուեր են և յայտարարած թէ Սիմոն մատնչական հաղորդակցութիւններով ընդ Բ. Դրան՝ վնասած է հայկական դատին :

Շնորհակալութեամբ ստացանք ԱՇԸԳ ՋԻՒԱՆԻԻ ԵՐԳԵՐԸ, Գ. Տպագրութիւն, տպեալ յԱղէքսանդրուպոլ, 1893.

ՈՒՐԱԽ ԵՄՔ կարենալ ծանուցանելու թէ ՀԱՅՔի համակրողք օգնութիւն անելու փոյթ կը ցուցնեն և արդէն Նիւ Եորքի, Լինի, Թրոյի և այլ գաղթականութեանց մէջ հանգանակութեան ձեռնարկած են : Ցարդ մեզ հասած գումարներն շատ համեստ են և կը ցուցնեն մեր գործաւոր ազգայնոց մեծ յօժարութիւնն և միանգամայն նիւթական նեղ վիճակն : Յառաջիկայ թուոյն կը վերապահեմք թէ նուիրատուութեանց և թէ քաջալերական նամակաց ոմանց հրատարակութիւնն : Կը յուսամք թէ օգնութեանց գումարին վերայ որոշ գաղափար կ'ունենամք մինչեւ այն ատեն, այսինքն Յուլիս 1ին, և կարող կը լինիմք որոշել թէ ՀԱՅՔն ամիսն միանգա՞մ թէ երկու անգամ պիտի կարենամք հրատարակել :

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏՆ կը մաքառի ահագին սովին դէմ որ այս տարի կը ցրէ, կ'աւերէ հիւսիսային Հայաստանն : Ն. Սրբութիւնն յատուկ կոնդակաւ յորդոր կարդացած է Ռուսահայոց օգնել սովեալ արենակցաց : Կոնդակին կարեւորագոյն մասանց ընդհանուր շահեկանութիւնն թելադրեց մեզ ՀԱՅՔի մէջ զետեղել զայնս : Նոյնն կարդացուեցաւ նաև Նիւ Եորքի Հայոց ժողովոյն մէջ Մայիս 19ի երեկոյին :

Հնդկաստանում հրատարակուող ԱՐԱ ամսաթերթին Ապրիլ թուոյն մէջ ի մէջ այլոց կը գտնեմք համառօտ և ազնուամիտ քննադատութիւն մի ՀԱՅՔի այն յօդուածին նկատմամբ որ կը կրէր «Անգլիա, Ռուսիա և Հայաստան» խորագիրն (տես ՀԱՅՔ Թիւ 2 և 3) : Այդ յօդուածի թարգմանութիւնն կուտամք մեր ընթերցողաց յառաջիկայ թուով :

ԿՈՆԴԱԿ

ՎԵՀ. ՀԱՅՐԻԿԻ

ԱՌ ՌՈՒՍԱՀԱՅՍ

...Այսօր գրեթէ վեցերորդ ամիսն է այն օրէն, երբ ես արժանի եղայ ողջունել Էջմիածնայ Մայր Աթոռ՝ շուտ անցան գնացին այնչափ ովսաննաներ և մեծագղորդ կեցցէներն և այժմ խոր լռութիւն և սխրութիւն տիրեցին մեր շրջապատը և միայն լսուում են անօթի, քաղցած գիւղական ժողովրդին և ընտանեաց մանրիկ զաւակներուն լացն ու աղաղակ։

Վեց ամսեայ միջոցում գրեթէ հաղարէն շատ աւելի զանազան խնդիրներ եկան կուտակուեցան առաջս։ Այդ խնդիրներ բազմատեսակ էին, մեծ մասն ամուսնական կնճռալից գործեր էին, որք կ'ուզէին լուծել և շուտափոյթ լուծել։ Մի մասըն ևս գիւղական ժողովրդի խնդիրներ էին, որք դաս դաս խմբովին եկան ներկայացան հետզհետէ և մատուցին իրենց համախօսական թղթեր, որոց թիւ հասնում էր մինչեւ հարիւր յիսունէն աւելի, և ի՞նչ էին խնդրում, Հայրիկ, քահանա՞յ կ'ուզենք, քահանա՞յ։ Ոմանք հաստատելով ասում էին, Հայրիկ, մեր գիւղեր՝կան որ հինգ տարի, ութ տարի և մինչև տասն տարի է, որ ծխատէր ու սեփական քահանայ չունիմք, որչա՞փ դժուարութեամբ ուրիշ գեղաններէ քահանայ կը մուրամք, մանաւանդ ձմեռը ձիւն ու բուք եղած ժամանակ։ Ոմանք թէ, մեր գիւղի քահանաներ ութսուն տարին անցուցած,խիստ ծերացած զառամութեան վիճակին հասած են, էլ չեն կարող պաշտօն կատարել։ Ժողովուրդի այս խնդրոց համար չեմ ուզեր մանրամասն գրել. Արարատի մէջ թող կարդան ընթերցողներ Արշէն երէցի քարոզ։

...Բայց եկ տես, որ խնդրոց ամենամեծ մասն՝գաղթականաց խնդիրն է, բոլորովին չքաւորած, կորոր մի հացի կարօտ գիւղական ժողովրդի պաղատանքն է, որոնք խումբ խումբ իրենց ընտանիքով, մանրիկ զաւակներով սկսեալ աշնանէն մինչև ցայսօր՝ կուգան կը լեցուին Էջմիածնայ Հայրապետանոցը։ Եւ տես դու ի՞նչ անհանդուրժելի տեսարան բացուում է մարդոյն աչքին առաջ։ Եւ ո՛վ կարող է գթոտ աչքով նայիլ և չարտասուել։...Ես մտիկ արի վշտագին ոգւով, դուք էլ մտիկ արէք, ժողովուրդ Հայոց, և տեսէք ի՞նչ կասեն։

Հայրիկ՝ մեք ոչ ամուսնական խնդիր ունիմք և ոչ քահանայի, մեք թողինք մեր քահանայն մեր գիւղի եկեղեցւոյն պահապան. եկեղեցին ու քահանայն մնացին առանց ժողովրդի, թողինք մեր շտեմարան, ալիւրի փեթակ, հացն ու թոնիր. տանտիկին ելաւ տնէն, կտրեցաւ ծուխն երդիքէն, թողինք մառանի եղեր՝ լի ամաններով պանիրներ, թողինք մեր կանաչ արտեր, մեր գութան ու հարօրներ, թողինք աննման Ալաշկերտու հայրենիք. Հապա մեր սուրբ Յօհաննու երեքխորան վանք, Նպատ լեռ. Եփրատայ սուրբ դեա, ամեն մեր ինչքեր կողոպուտ տուինք, առինք միայն մեր ընտանիք հարսներ և հասած աղջիկներ եկանք քրիստոնեայ երկրին ապաստանեցանք։ Մեք շատ զոհեր տուինք մեր ընտանեաց սիրոյն համար, որպէս զի ազատենք զանոնք առևանգող բիրտ քիւրդերուն ձէռքէն։ Է՛, Հայրիկ, մեք այժմ ուրիշ բան չենք խնդրեր, մեզ պէտք է միայն պատսպարան ու հաց, դի մենք անտուն և անօթեւան մնացինք։

Այսպէս, ժողովուրդ Հայոց, աղուէսներ սեփական որջ ունին, երկնից թռչուններ բոյն, ինչպէս ասաց Քրիստոս, որ իւր գլուխ դնելու տեղ չունէր։ Միթէ Քրիստոսի նման իւր հաւատացեալ գաղթական հայ ժողովուրդ ունի՞ իւր գլուխ դնելու տեղ։

Կարսի սահմանագլխէն սկսեալ գաղթական ժողովրդի տարածութեան մի ծայր հասած է մինչև Երեւանայ դաշտի գիւղեր. թէև մեծագոյն մասն Կարսի նահանգում տեղաւորուած են։ Զեմք մոռանար երախտագէտ ոգւով յիշել աստ և յանուն ազգին յայտնել իմ շնորհակալութիւնս Երեւանայ և Կարսի նահանգապետներուն, որք բարձրագոյն հրամանաւ և իրենց բարեսիրտ աղնուութեամբ թոյլ տուին գաղթական անտէրունչ ժողովուրդին, որ մինչև գարնան հիւրընկալուին Հայոց գիւղերում։

Եւ ի՞նչ պիտի լինի գարուն, որ եկաւ ահա, միթէ անաշխարհիկ անբնակ բոնա-

ւէր թռչնոց համար գարուն աւետարե՞ր է։ Որոց համար աւա՛ղ, որչա՞փ յարմար է բանաստեղծին երգ.

«Ինձ համար չէ գարնան գալը», նոքա պիտի յիշեն Բագրեւանդայ և Սուքաւէտ ծաղկազարդ ու ցրաշատ լերան գարուն։

Օրհնեալ լինին Շիրակայ և Արարատեան դաշտերու գիւղական բնիկ Հայ ժողովուրդներ, որք հիւրասէր հայր Աբրահամու պէս իրենց դռներ բացին, ուր մըտան տեղաւորուեցան խեղճ ու թշուառ գաղթական ընտանիքներ։

Քանի՞ դառն ու դժար է, Բագրեւանդայ ճոխ տանուտէր, որոյ դուռ բաց էր, հացալից սեղան պատրաստ ամեն հիւրերուն, նա մարագի քունջ հաւու պէս ծուարեցաւ իւր ընտանիքով և ձագերով և լաւագոյն համարեց այս խեղճուկ կեանքը, որ ազատեցաւ քիւրտերու սոսկալի բռնութենէն։

Այսպէս առ ժամանակ մի թէպէտ գիւղերում զետեղուած են գաղթական ընտանիք, այս ամեն օր և շաբաթ դիմում են Մայր Աթոռի դուռը, ոչ միայն կարօտութեան համար, զի մեզ շատ յայտնի է նոցա դառնավիշտ վիճակ, թողունք օրապահիկ հացի սնունդ. կը տեսնեմ աչքովը իրենց պատառոտած կերպարանք, սոսկ կտաւէ շապկի մի կարօտ, մանկիկներ մերկ ու բոպիկ։ Զարշարանքի վարժուած ժողովուրդ դեռ համբերում է այս տառապանքի մէջ և իւր ապագայն մտածելով հարցնում է, Հայրիկ, վեր վախճանը՝ ի՞նչ պիտի լինի։

Իսկ ես խոր մտածութեան մէջ վարանած, չգիտեմ թէ ինչ պատասխանեմ կամ յուսադրեմ այդ լքեալ ու վհատեալ ժողովուրդ. կսկիծ վարդապետական քարոզ կարդալ, ամեն բան ու ժամանակի հանգամանքներ պարզ կերպով բացատրել իրենց և յորդորել, որ դարձեալ իրենց հայրենիք վերադառնան, վաւնզի կարելի չէ որ Արարատեան երկիր նոր գաղթականութիւն ընդունի, որովհետև իւր բնիկ ժողովուրդ այնչափ աճեր ու բազմապատկեր է, որ այլ ևս մշակելի հողեր բաւական չեն իրենց համար. դուք մի յուսաք թէ բնիկ երկրի ժողովուրդ թիզ մի տեղ ձեզ հողաբաժին կուտայ. հաց ու պատսպարան տուաւ ձեզ մի փոքր ծամանակի համար, կարծում էք հո՞ղ էլ պիտի տայ։

Դուք ձեր Ալաշկերտի դաշտում շատ հարուստ էիք ձեր ընդարձակ հողերով և իբրեւ տանուտէր կապրէիք, գիտէ՞ք թէ քանի՞ դառն է ձեզ համար երբ հողատիրութենէն զրկուելով՝ ծառայ և մշակ դառնաք այստեղ և այնտեղ, ձեր սեփական հողեր օտարներ գրաւեն։

Ձէ, Հայրիկ, չէ, դու չդիտես մեր քաշած անտանելի զրկանքներ, թէ միայն ընչից յափշտակութիւն լինէր, այդ ոչինչ էր, զի մենք շատ վաղուց ի վեր սովորած եմք այդ կերպ զրկանքներուն, բայց մեր աչքի առաջ մեր ամուսիններ և մեր աղջիկները ամենայն բռնութեամբ վայրենի քրդեր յափշտակում են և կը տանին բռնի կերպով Քրիստոսի հաւատք ուրանալ կուտան. այլ ևս մեք կարո՞ղ եմք հանդուրժել։

Թո՛ղ, Հայրիկ, թող, մեք ծառայ լինիմք, մշակ դառնամք, միայն ապահով ապրինք մեր ընտանիքով ու զաւակներով։

Այսպէս կը մտածի կը խոսի ու պատասխան կուտայ վշտակիր ժողովուրդ և ո՛վ կարող է մեղադրել զինքը։

...Ուստի հրաւէր կարդալով առ բոլոր սիրելի ազգայինս Ռուսիոյ, կոչեմ զձեզ ի գթութիւն, ի կարեկցութիւն գիւղական քաղցած ժողովուրդին։ Ոչ եթէ խնդրում եմ, որ համայն ազգայինք հաւատարապէս ընդհանուր հանգանակութիւն բանան, զի այդ մասին բարձրագոյն հրամանի պէտք կայ, այլ մասնաւորապէս կարող անձինքներէն կամաւոր նպաստ ևողորմութիւն կը խնդրեմ յանուն աղքատին, որ զիս իբրեւ իւր ձեռք կարկառում է։

...Աղօթեմ և վաղն ձեր ժողովուրդ Հայոց, դուք ևս ընդունելով Հայրիկին հրաւէր ձեր փոքրիկ փոքրիկ աղբերակներէն ակներ բանաք և ծարաւած ժողովրդին բաժակ բաժակ ջուր բաշխէք, գիտելով և հաւատալով որ վարձատրիչ տէր Աստուած ձեր բաժակներու փոխարէն երկնից արքայութեան դրախտի գետերէն պիտի բաշխէ, որոյ ջուրն կենաց անմահական ջուրն է։

Իսկ՝ թէ արժանի անէ Տէր ամեն ծարաւած հոգիներուն ըմպել այդ կենաց ջուրէն և օրհնել զանուն նորա յաւիտեանս. Ամէն։

ԽԵԼՕՔ ԵՒ ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԻԿ

Թէ ամեն մարդ միևնոյն չափով ուղեղ և իմացական ոյժ չունի, այն արդէն ծանօթ է։ Ինչպէս մարմնոյ նոյնպէս մտքի ուժով իրարմէ տարբեր են ամենայն անհատք։

Բայց երբ խելացի և անխելք մարդոց մասին կը խօսիմք, յիշողութեան, երեւակայութեան և այլ իմացական կարողութեանց տարբերութեան չեմք ակնարկեր․ այդ տարբերութիւններ այնքան ակներեւ չեն միշտ։ Երկու հոգի կրնան ունենալ գրեթէ նոյն չափով իմացական կարողութիւն կամ խելք, բայց և այնպէս մին կրնայ շատ խելօք լինիլ քան զմիւսն։ Ուշիմ մարդ մի կրնայ թիւր գաղափարներով լեցուն լինիլ, մինչ հազիւ նոյնքան ուշիմ ուրիշ մարդ մի կրնայ աւելի ուղիղ, ողջամիտ համոզումներ ունենալ։ Տարբերութիւնն յառաջ կուգայ իմացական ոյժն գործածելու, խնդիրներն դիտելու և քննելու կերպերուն տարբերութենէն։ Մին խելքն լաւ կը գործածէ, միւսն չարաչար։ Տեքարդի այն գաղափարն թէ խնդիրներն քննելու ուղիղ կամ սխալ մեթոտն աւելի կարեւոր է քան թէ ուշիմութեան չափն, ամենօրեայ դիտողութեամբ կ'ապացուցուի։

Մոլութիւններու, սխալ քաղաքականութեան, թիւր օրէնսդրութեանց, մոլոր կրօններու պատճառն խելքի պակասութիւնն չէ այնքան որքան խելքն ըստ արժանւոյն գործածել չգիտնալն։

Գահավէժ դատաստանն, աճապարանօք կարծիք կամ համոզում կազմելն ընդհանուր իմացական ախտ մ'է մարդկային ցեղին։ Մարդիկ չեն զգար թէ աշխարհ, տիեզերն մեծ է, թէ խնդիրներն ահագին են, թէ գաղափարք իրարու հետ կապակցութիւններ ունին և թէ մասն տեսնելով ամբողջն դատել, երեսն տեսնելով խորն դատել չէ արժան։ Չեն զգար թէ իրենց խելք չափ ու սահման ունի և թէ խնդիր մի ըստ արժանւոյն ուսումնասիրելու և ուղիղ դատողութիւն անելու համար պէտք է միտքն բաւական երկար ատեն անով զբաղեցունել, կրկին ու կրկին քըննել, ուղեղ յոգնեցունել։

Վաղվաղկոտ դատողութիւնն ամեն օր ամեն վայրկեան կը լսուի։

Օրինակներով պարզեմք։

Ամերիկացւոց սեղանի մի վերայ միանգամ միւլադօններու (սեւ և սպիտակ ցեղերու խառնումէն յառաջ եկած սերունդ) բնաւորութեան մասին խօսք կը լինէր․ ես ասացի թէ չեմ զարմանար որ նոցա բաղձալի յատկութիւններէ զուրկ գտնուին, զի այդ տեսակ խառն սերունդներ ընդհանրապէս վատ կը լինին։ Եւ յիշեցի կենդանիներումէջէն օրինակ զջորին, որ իշու և ձիու խառն սերունդ է և անհամբոյր կենդանւոյ համբաւ կը վայելէ։ Ամերիկացի սեղանակիցներէն մին առարկութիւն յարոյց յիշելով թէ ինքն երբ հարաւ կը գտնուէր, ճանաչեր էր անդ իւր բարեկամի ջորին որ շատ հեզ էր, և ուստի չէր կարծեր որ ջորիներն արդարեւ վայրենի միտումներ ունենային։ Ինքն իմ կարծիքիս վերայ կը զարմանար և ես իրենին։ Ասացի թէ ինքն մի քանի ջորի տեսած է թերեւս, ես տեսած եմ բիւրաւոր յարեւելս, գիտեմ թէ Հայ և Թուրք ջորեպանք ինչ համարում ունին ջորւոյ բընաւորութեան վերայ։ Մարդկային ցեղին գալով յիշեցի ճանապարհորդ ցեղաբաններու, աշխարհագիրներու և մարդաբանից համոզումն, Տորուինի, Լիվինկսթընի, Ակասիզի և այլոց, որք խառնածին ցեղերու անբարոյական վիճակն դիտած են որ ստորին է քան արտադրիչ երկու ծնողացն եւս վիճակն։

Այդ մարդ ուսումնական չէր, յիշենք ուսումնական մարդու օրինակներ։

Նիւեորքի մէջ մի քանի շաբաթէ ի վեր հանրային խորհուրդն զբաղեցունող խընդիր մի կայ, այն է թէ կանայք եւս քուէարկելո՞ւ են թէ ոչ՝ արանց հետ հաւասար իրաւամբ։ Մամուլն, բեմերն, քլըպներն վէճի նիւթ են արած զայն, և կը խօսին թէր կամ դէմ։

Կարգ մի մարդիկ կային ինտէլլիգէնտ դասուն մէջ որք խնդիրն իսկոյն հրապարակախօսութեան նիւթ արին․ երէցներէն ոմանք իրենց եկեղեցեաց մէջ երեկոյեան քարոզի նիւթ ընտրեցին զայն և ջատագովեցին կանացի քուէարկութիւնն։ Դոքա ուրախ եղան որ խօսելու, արմուկ հանելու առիթ մի գտած էին․ պէտք է խօսէին և իրենց անունն յիշուէր մամլոյն

մէջ։ Ո՞ր կողմէն խօսէին, ի նպա՞ստ թէ ընդդէմ. ի հարկէ ի նպաստ։ Ի՞նչ նորութիւն, ի՞նչ ուշագրաւ բան կայ կանայք պէտք է չքուէարկեն ասելու մէջ. արդէն չեն քուէարկեր։ Հարկ է ուրեմն աղաղակել թէ պարտին քուէարկել, այդ աղաղակ ժողովրդական, ազատամտական, բարձրը, ազնիւ, իրաւասիրական եղանակ մի կ'ունենայ, կանանց բազմութիւն կը հրապուրէ ի ժողով...։ Եւ Մինթէ չէ՞ կարելի փաստեր, զօրաւոր փաստեր յառաջ բերել հաստատական կողմէն. անշուշտ կարելի է, և դիւրին ալ է։ Եւ յիրաւի բերին առատայորդ խօսքերով։

Ուրիշ կարգ մի մարդիկ ևս կային, նաև կանայք իսկ, որք տարբեր էին վերոյիշեալ ուսումնականներէն։ Սոքա ոչ թէ խօսիլ, աղաղակ բառնալ կը բաղձային, այլ խնդիրն քննել, ուղիղ եզրակացութեան մի գալ։ Խնդրոյն խորն մտան, բուն խնդրոյն, որ սա է թէ արդեօք կանանց պարտուց կամ իրաւանց բնական սահմանին մէջ կ'իյնա՞յ քուէարկութիւնն, և թէ արդէօք երկրին լաւագոյն օրէնսդրութեան և կառավարութեան համար օգտակար և հարկաւո՞ր է որ կանայք ևս քուէարկեն իբրեւ զայր մարդիկ։ Ի հարկէ, սոքա ևս հաստատական կողմին ի նըպաստ խորհուրդներ ըմբռնեցին, բայց այդու չեկան իսկոյն եզրակացութեան. քննեցին խնդրոյն երկու կողմերն, թեր և դէմ փաստերն կշռեցին զգուշութեամբ միտք յոգնեցուցին և այնպէս հասան բացասական եզրակացութեան։

Սխալելու վտանգն ահապարանքէն կուգայ յաճախ։ Երբ խնդրոյ մի դէմ կամ թեր փաստ մի կը տեսնեն մարդիկ, այնու գոհ կը լինին, իբր թէ անդրագոյն քննութեան տեղ չկայ, և անմիջապէս կը կազմեն կարծիք և մինչեւ իսկ համոզում։ Այդպիսիներն են ահա անխելք մարդ, ոչ վասն զի փաստ չտեսած համոզուեցան, այլ վասն զի աւելին չփնտռեցին, հակառակ կողմն չքննեցին, չհամբերեցին։

Ես կը ճանաչեմ մարդ մի որ իւր մէկ բարեկամին հարցնելով թէ ինչ է ընկերվարականութիւն՝ ստացաւ ինչ ինչ հարեւանցի ծանօթութիւններ, և, սքանչելի՛ բան, յաջորդ շաբթուն սկսաւ ընկերվարականութեան ի նպաստ ճառ խօսիլ հրապարակաւ, և խօսիլ այնպիսի համարձակ և վճռական շեշտերով որպէս թէ սարիներ նուիրած լինէր խնդիրն ուսումնասիրելու։ Կը ճանաչեմ ուրիշ մարդ մ'ալ, որ թէև խնդրոյն անտեղեակ չէր, օրինաւոր համարձակութեամբ խօսելու և համոզուս արտայայտելու համար ամբողջ տարի մի համալսարանի մի մէջ ընկերվարականութեան վերայ տրուած կանոնաւոր դասերու ընթացքին հետեւեցաւ։

Մեր մէջ պէտք է յաճախ պնդել և կրկնել թէ կարծիք և համոզում կազմել դիւրին բան չէ որպէս առ հասարակ կը համարուի. խելքն ուղիղ սկզբունքով պարտ է գործածել և խղճմտութեամբ քննել ու դատել խնդիրներն ու մանաւանդ անձնաւորութիւններն։

Ո՛րքան յաճախ կը պատահի որ հարեւանցի, կարճ տեսութենէ մի յետոյ մարդիկ ասեն թէ այս ինչն վատ է կամ այն ինչն լաւ։ Դոքա գաղափար իսկ չունին թէ մարդ ճանաչել որքան դժուար է։

Յաճախ սխալ դատողութեան կ'առաջնորդուին մարդիկ արտ-իմացական շարժառիթներով։ Ասել կ'ուզեմ թէ չափազանց դիւրութեամբ կը համոզուին երբ համոզուիլ հաճելի է իրենց, իսկ երբ իրենց բաղձանաց հակառակ է՝ բիւր փաստ չեն զօրեր ազդել։

Օր մի Ֆռանսացի մէկ ծանօթս եկաւ ինձ մտերմօրէն հարցաւ թէ այս ինչ զուլցերիացի երիտասարդն — որ իւր քենին առնուլ կ'ուզէր—ի՞նչպիսի ոք է։ Ի հարցանելն քիթն ու շրթունքն այնպէս ծամածռեց որ յայտնի ցուցնէ ինձ թէ ինքն վատ համարում ունէր անոր մասին։ Պատասխանեցի թէ գերազանց երիտասարդ մ'էր նա, բնաւորութեամբ և տաղանդով շատ յարգելի։ Յայնժամ պատմեց ինձ թէ յոյժ աննպատուաբեր մի տեղեկութիւն ստացած էր ինքն նորա մասին։ Ես զգուշացուցի զինքն թէ գուցէ թշնամական աղբիւրէ ծագած լինէր զրոյցն, և թէ արժան չէր դիւրաւ և առանց խիստ քննութեան հաւատ ընծայել այնպիսի խօսքերու։ Մարդն չսիրեց իմ անհամաձայնութիւնս, զի յայնմ հետէ դադրած է զիս իւր ընտանեկան բժիշկ ունենալէ։

Մարդիկ կան որ ձեր կարծիքն կը հարցնեն, բայց կը բաղձան որ իրենց համաձայն կարծիք յայտնէք։ Նոքա լոյս չեն փնտռեր, այլ իրենց կարծեաց հաստատութիւն։

Մարդիկ ալ կան որ ձեր կարծիք կը հարցնեն, կ'իմանան, և եթէ չհամաձայնիք իրենց, այդ պատճառ չըլլիր որ ձեզ անարգեն կամ ատեն: Նոքա այն ազնիւ մարդոց կարգէն են որ կարծեաց ազատութիւնն յարգել գիտեն:

Յարգելի ընթերցողներէն ոմանք պիտի տեսնեն այս մի քանի խորհրդածութիւններէն թէ խելօք մարդն խղճամիտ և ազնիւ մարդն է, որ անձնական ու եսական շարժառիթներէն վեր բարձրանալով կը մտնէ բուն խնդրոյն մէջ, կը խնդրէ զճշմարտութիւն, զճիշդ իրողութիւն, և կը խնդրէ ի բոլոր մտաց և ամենայն համբերութեամբ:

Երբ մեր երիտասարդաց մէջ խորհելու զգուշաւոր և խղճամիտ եղանակին ճանաչուի և յարգուի յայնժամ ճշմարտապէս արժէք ունեցող և ՅԱՐԳԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ կը գոյանայ:

ԿԱՐԱՊԵՏ ԹՈՒՄԱՅԵԱՆ
ԵՒ
ԱՐՀԱՒԻՐՔ ԹՐՔԱԿԱՆ
ԲԱՆՏԻՑ

Սուլթան Ապտ-իւլ-Համիտ Խան, ամենահնար իմաստութենէն միանգամ թերանալով՝ ակամայ ծառայութիւն մի մատոյց Հայկական դատին:

Թուրք կառավարութիւնն որ հազարաւոր Հայեր յանիրաւի բանտարկած է վերջին տարիներս, իւր լայնածաւալ ցանցին մէջ ձգեց նաև զԿ. Թումայեան որ ի Զուիցերիա ուսեալ՝ Մարզուանի հայ-ամերիկեան գոլէճին մէջ ուսուցիչ էր: Օր մի երբ վարժարանէն ի տուն կը վերադառնայր, հրաւիրուեցաւ կառավարութեան պալատն, ուր պաշտօնեայ մի ծանոյց նմա թէ իւր հիւրն է, և հոն պէտք է մնայ:

Նոյն գիշեր կ'երթան տան բոլոր թղթերն կը խուզարկեն, բայց՝ ի հարկէ՝ վնասակար ոչ ինչ կը գտնեն: Որոշած են սակայն թէ առանց վնասակար թղթի ալ Թումայեան ինքնին վնասակար ոք է, և յեղափոխական ընկերութեան մի գլուխ, ուստի և պէտք է հիւր մնայ բանտին մէջ: 1893 Յունուար 28ին էր որ ձերբակալուեցաւ, և յայնմ օրէ չեղաւ ազատ մինչև Թուրքիոյ սուրբ հողէն արտաքսուելու օրն: Նախ իբր երկու ամիս Մարզուանի մէջ բանտարկութիւն կը կրէ. ապա գիշեր մի յանկարծ փայտէ դէլեր անցունելով ձեռքերն, ուրիշ 40 ընկերներու հետ, կը լեցունեն կառքերու մէջ և ճամբայ կը հանեն դէպ անծանօթ կողմ մի: Ճանապարհին անհարթութենէն կը ստիպուին հետիոտն գնալ, և 16 ժամ շարունակ կիսամերկ և ձեռնկապ կը քալեն առաջին օթևանն հասնելու համար: Գէլերն ծանր էին, ամեն մէկն մինչև իբր 14 փաունտ կը կշռէին, և մսերն շարաչար կը վիրաւորէին ու կը ցաւցունէին: Դատապարտներն ուռեցան, սակայն փոյթ չէր Թուրք պաշտօնէից, նոքա գէլերն հանելու համար պատրաստ էին ի հարկին ձեռքերն կտրել ...: Պահապան զօրքն գիշերայն կը տանին զիրենք ի փոքր քաղաք մի, ուր թոյլ չեն տար որ քրիստոնեայք ոև է առնչութիւն ունենան նոցա հետ, և հանդերձ կամ կերակուր բերողներն ճանապարհին վերայ կ'արգելուն: Դիտմամբ այնպիսի տեղ մի կը տանին կը բանտարկեն զիրենք որ ոչ ոք կրնար մտածել, և նպատակն էր ենթադրել տալ Հայոց թէ քառասունքն աներևոյթ եղած էին: Կանոնաւոր տանջանք կուտան այդ անդատեալ և անդատապարտեալ արանց, ի ծածուկ, 40էն մինչև 300 հարուած գաւազանի, մինչև որ գանաբեկեալն նուաղի խնայ արիւնաթաթաւ: Զմրան ցրտագին օրերն տանջելու սա կերպն կը գործածեն երբեմն— զբանտարկեալն կը կախեն բազուկներէն կամ պարանոցէն, ծանրութիւն կը յաւելուն ոտիցն, և ապա ցուրտ ջուր կը հեղուն մարմնոյ վերայ և կը թողուն որ այնպէս սառած մնայ մինչև մահամերձ լինիլ: Երկու Թուրք բանտարկեալներ բանտին պատն ծակելու փորձ են փորձեր, և երբ գիտցուեր է, ասած են թէ իրենց 15 հայ բանտակիցք փորձեր են զիրենք առ այդ: Խեղճերն ի խոստովանութիւն ածելու համար կը տանջեն և Թումայեան կը լսէ նոցա աղեկէզ աղաղակներն: Տանջուածներէն մին շուտով կը մեռնի, և կառավարութեան բժիշկն կը տեղեկագրէ թէ սրտի ախտէ մեռած է: Ուրիշ տանջեալ մ'ալ կը մեռնի Փրոֆէսորին արձակուելէն յետոյ: Երրորդ մի,

որոյ դրամն ու համբերութիւնն սպառած էր կաշառք տալով, կը յայտարարէ թէ ամեն ինչ պիտի յայտնէ երբ դատաստան լինի։ Պաշտօնեայք իմանալով զայս, բժիշկ կը յղեն որ քննէ, և սա կը տեղեկագրէ թէ մարդն խելագարեալ է· ասոր վերայ կը յղեն զՀէգն ի Պոլիս, յիմարանոց մի, ուր այնքան չարաչար կը տանջեն զինքն որ քիչ ատենէն կը վախճանի։

Այս և այսպիսի բազում գաղտնեաց իրազեկ դարձած, իւր ձեռաց և թիկանց վերայ պատժուած, բանտէ ի բանտ նետուած, մահուան դատապարտուած հայ ուսուցիչն է որ վերջապէս կ'ազատի, մահուան վճիռն արտաքին ճնշման ներքեւ բեկեալ լինելով, և հրաման կ'ընդունի Թուրքիայէն դուրս ելնել, կորսուի՛լ...։

Սուլթանին զեղծ կառավարութեան համար աւելի լաւ էր եթէ Թումայեան, յետ արձակմանն, մնայր ի Մարգուան և շարունակէր իւր պաշտօն, գի յայնժամ, յիշելով դառն փորձառութիւնն, պիտի զգուշանար թրքաց դէմ չչնչելէ իսկ։ Բայց Բ. Դուռն արտաքսեց զնա երկրէն որ երթայ պատմէ քրիստոնեայ աշխարհի ինչ որ լսած, տեսած ու կրած է։

Եւրոպիոյ մէջ ուրիշներ ալ կան Հայոց մասին լաւ խօսող, սակայն նոցա տեղեկութեանց աղբիւրն թղթակցութիւնք են։ Մինչև իսկ ուղեւորներու պատմութիւններն երբեմն տարակուսի տակ կը ձգեն հակառակորդք։ Սակայն բանտերու խորերէն դուրս եկած կրթեալ մի մարդու խօսքերն բացարձակ հեղինակութեան կնիքն ունին և ժողովրդի մտքէն ամեն տարակոյս կը փարատեն։

Փրոֆ. Թումայեան Անգլիա գալէն ի վեր անդադար կը շրջի քաղաքէ ի քաղաք և եկեղեցեաց մէջ կը պատմէ իւր փորձառութիւններն ի ձեռս Թուրք կառավարութեան. ունկնդիր ժողովուրդք կը սոսկան, կը քստմնին ի լուր այդ անուրանալի խժդժութեանց և յստակ գաղափար կը կազմեն Հայոց դժպհի կացութեան մասին։

Երկար ոգի և շունչ կը մաղթենք մեր աքսորեալ հայրենասիրին և մեր ջերմ շընորհակալութիւնն կը մատուցանենք Սուլթանին որ բարեհաճեցաւ զնա Եւրոպա արտաքսել փոխանակ իւր հսկողութեան տակ պահելու....

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ՀՆՉԱԿ

Հնչակի 6րդ թուոյն մէջ կը կարդամք —«ՀԱՅԿ-ը այդ (Կէրէքցեանի) սպանութիւնը մեզ վերագրելով, բացարձակաբար և վատաբար զրպարտում ու ստում է։ Կէրէքցեան ինքը Հնչակեան էր...»։

Հայք ոչ Հնչակեաններու այլ, Կարնոյ Նամակին հետեւելով, ռուսահայ գործիչներու վերագրած է այդ սպանութիւն։ Առանց կրից և բարկութեան կարդացող ամեն ոք կրնայ յօդուածին ընթացքէն տեսնել զայդ բաւական յստակօրէն։

ՀԱՅԿ Կէրէքցեանի նահատակութիւնը եթէ Հնչակեանց ընծայած լինէր, ինչո՞ւ պիտի հարցնէր թէ «արդեօք բնաւ անկեղծ մարդ ու հայրենասէր չկա՞ր ա-նո՛նց մէջ ևս որք ոնչակեանց կողմանէ ըսպաննուեցան ի Թուրքիա այլ և այլ ժամանակ ու տեղ։» Այդ հարցում կատարեալ յստակութեամբ չի՞ նշանակեր թէ հայրենասէր Կէրէքցեանի սպանումն Հընչակեանց գործ չէր նկատած ՀԱՅԿ։

Պարո՛ններ, խնդրեմ ձեր տրամաբանական կարողութիւնն գործածեցէք երբ լրագիր կը կարդաք, որպէս զի չլինի՛ թէ դուք ինքնին զրպարտէք ուրիշներն երբ այնքան դէմ կը խօսիք զրպարտութեան։

ԱԺԱՆ ԳԻՐՔ

Ապրիլ 1էն մինչև Յունիս 30, 1894, հետեւեալ գրքերն կը վաճառուին զեղջեալ գներով որպէս ի ստորև—

«Հայք»ի Ա. տարին 1 տոլար կամ 5 ֆր.
,, Բ. ,, 1 ,, ,, ,,
,, Գ. ,, 1 ,, ,, ,,

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ 50սէնթ կամ 2 ֆր. ու կէս։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, որոյ գինն է 10 սէնթ և ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ որոյ ևս գինն է 10 սէնթ, եթէ 5 օրինակի գինն մէկէն կանխիկ վճարէ ոք (այսինքն 50 սէնթ կամ 2 ֆր. ու կէս), կը ստանայ ուրիշ հինգ օրինակ ալ ձրի։

«Խրիմեան Հայրիկ» և «Հայ Բողոքականութեան Անցեալն ու Ապագայն» աշխատութիւններէն սակաւաթիւ օրինակներ միայն մնացած լինելով, սովորական գներովն կը վաճառուին։

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "HAIK" 139 West 22nd St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" և ն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն Փրանք
կանխիկ

Ի՞ՆՉ ԲԱՆ Է ՈՐ ՄԵԶ ԿԸ ՊԱԿՍԻ

ԴԱՍ ՄԻ՝ ՌՈՒՍԱՀԱՅ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԷՆ

Կովկաս, 18 Ապրիլ, 1894

Ձեր գնահատելի ՀԱՅՔում կարդալով պատմութիւնն Ռուսահայ շարժմանց, ցանկացայ մի քանի տող գրել այն մասին և յետոյ իբրեւ եզրակացութիւն նշանակել թէ ինչ բան է որ մեզ կը պակսի:

Այն մեծ ոգևորութիւնը որ Կարինի ահաւոր կոտորածէն յետոյ տեսնուեցաւ, Կովկասի մէջ, աւելի մեծ ու ընդարձակ էր քան ձեր յարգելի թղթակիցը նկարագրած է: Նաև յոյսը մեծ էր: Շատեր կը յուսային թէ Պուլկարիոյ յեղափոխութեան նման կարեւոր և արդիւնաւոր մի շարժում պիտի լինէր Թրքաց Հայաստանում և պիտի լինէր անմիջապէս:

Այս ոգեւորութիւնը միայն անփորձ և մեծայոյս երիտասարդութեան մէջ չէր, մեր մեծատուն և մեծանուն դասերուն մէջ ալ տարածուեցաւ: Արծրունին ինքն իսկ գործոյն մէջ մտաւ ժամանակ մի: Հարուստները ահագին գումարներ խոստացան և պատրաստ էին տալու, միայն թէ կը ցանկային յանձնել զայնս հաւատարիմ ձեռքերու: Խորհուրդ տրուեցաւ որ Արծրունի արտասահման գնայ և գանձապահ լինի, սակայն նա չհամոզուեցաւ՝ վախնալով թէ բան գլուխ չելնէր և «Մշակը» ի զուր զոհ կը լինի: Թիֆլիսի կառավարիչն ալ այս ներքին դարձուածներուն իրազեկ լինելով՝ Արծրունւոյ և մեծատանց ծանոյց ի ծածուկ թէ պէտք է ետ քաշուին եթէ անհաճոյ պատահականութեանց տեղի տալ չեն ուզեր: Ասոր վերայ կարեւորագոյն տարրերն նահանջեցին:

Եռանդոտ, կրքոտ, աննախատես, անփորձ երիտասարդներն մնացին հրապարակին վերայ: Կուկունեանցի նման թերուս, չիմաստուն մի մարդ գլուխ եղաւ Հայաստան գնալու խմբին: Կուկունեանց այդ անհասկացող երիտասարդներուն առաջնորդ լինելու համար ունէր բաւական ... մեծախօսութիւն, և ամբողջ խումբն փորձանքի մէջ շուտով ձգելու համար ևս ունէր առատ անխոհեմութիւն: Նորա պատմութիւնը և ելքը չպիտի կրկնեմ հոս, քանզի ամենուն ծանօթ է արդէն: Միւս նուազ բազմաթիւ խմբերն ալ հետզհետէ լուծուեցան առանց Թրքաց հողի վերայ ոև է գործ քաջութեան փորձելու:

Ռուսահայոցս այս վիժեալ շարժումներուն պատմութիւնը շատ խրատալից է: Անկէ կրնամք սորվիլ թէ ի՛նչ բան է որ մեզ կը պակսի:

Դրա՞մը— ո՛չ. դրամ կայ: Մի մեղադրէք մեր հարուստները: Մեծատանց մէջ կան որք յօժար են Հայաստանի փրկութեան համար վիթխարի գումարներ նուիրել:

Եռա՞նդը— ո՛չ. եռանդ ալ չէ պակաս: Մեր երիտասարդներն ոգեւորել դիւրին է: Ուրեմն և ոչ զինուոր կամ զարնող բազուկն է որ կը պակսի.

Ի՞նչ է պակաս ուրեմն

Վարչութիւնն է պակաս: Հարուստն փող պիտի տայ, բայց հարկ է որ գիտնայ թէ հաւատարիմ և կարող ձեռքերու մէջ կը դնէ փողն: Երիտասարդն իւր արիւն պիտի նուիրէ, բայց հարկ է որ վստահելի առաջնորդ ունենայ:

Ուրեմն ես ալ կը հասնիմ այն եզրակացութեան որուն վերայ դուք տարիներէ ի վեր կը պնդէք թէ հարկ է կազմակերպել մի կարող, վստահելի կեդրոնական վարչութիւն: Այդպիսի կեդրոն պէտք է կազմուի փորձառու և հայրենասէր ինտէլիգէնտ դասու ընտիրներէն: Այս ընտիրներն պէտք է խորհին, ուսումնասիրեն և կազմաւորեն մի ծրագիր, մի որոշ ուղղութիւն, և երբ այդպիսի մարմին մի որոշ ծրագրով գոյութիւն առնու, Թրքաց Հայաստանի խնդիրն կրնայ լաւ ճանապարհի մէջ մտցուիլ:

Դուք, ուրեմն, յարգելի խմբագիր, շարունակ պնդեցէք ձեր կենսական առաջարկի վերայ:

ՌՈՒՍԱՀԱՅ

ԸՆՄԻՒԸՐԸՆՈՒԹԻՒՆ ՀԸՅՈՑ(°)

ՀԱՄԱՌՕՏ ՎԷՊ ՄԻ, ԻՐԱԿԱՆ ԴԷՊՔԻ ՎՐԱՅ ՀԻՄՆԵԱԼ*

Ասկից տասնեւհինգ տարի առաջ, Կ. Պոլիս բժշկութիւն կընէի և Բերայի մէջ բնակատեղիէս զատ Պոլսոյ կողմը Ֆինճանճըլար եօգուշու, Շարգ կոչուած խանի մէջ սենեակ մի վարձած լինելով կը դարմանէի հիւանդներ :

Օր մի երբ առանձին սենեակիս մէջ նստած, Ամերիկայէ նոր եկած բժշկական թերթ մի կը կարդայի, երկու Թուրքեր ներս մտան, երկուքն ալ սոֆթաներ էին : Մին ունէր բաւական խոհեմ և վայելուչ երեւոյթ, իսկ միւսն կոշտ, հիւանդոտ և չարադէմ էր, նորա դէմք վէրքերով լեցուն էր : Թէպէտ իրարու ամենեւին չէին նմաներ, հասկցայ քիչ վերջ որ եղբայրներ էին :

Քաղաքավարութեամբ հարցայ թէ ինչ կրնամ ընել իրենց · հիւանդոտ սոֆթան սկսաւ աղաչել այսպէս, «Հէքիմ պաշի, այաքլարընի էօբէյիմ, պանդա պիր տէրման», և սոյն նման խօսքեր : Նոյնը կրկնեց իւր եղբայրը բացատրելով իւր եղբօր վիճակն :

Մի հարեւանցի քննութիւն անելով տեսայ թէ մարդն իւր անառակ կենցաղովն փճացուցած էր իւր կենսական ոյժերը և «Գաղիական ախտն», նորա մարմնոյն ամէն կողմը, իւր ամեն աստիճանի նշանները թողած էր, բայց գալով բուն իւր այժմու քաշած չարչարանքի պատճառին, այն ախտն էր որ բժիշկներ «բօլիբըս» կը կոչեն, այսինքն՝ քթին մէջ տանձի նման մսի կտորներ կը բուսնին և կը պատճառեն հնչարգելութիւն, ցաւ և անտանելի նեղութիւն :

Ցոյս յայտնեցի իրեն որ կրնամ զինքն դարմանել եթէ բոլորովին ինքզինք ինծի յանձնէ, գալով որոշեալ օրեր. և թէ եօթը ոսկւոյ չափ աշխատութեան վարձք և դեղերու համար ծախք կը բաւէր :

*Սոյն դէպքն փոքր ինչ տարբերութեամբ պատահած է Տր. Մարգար Գ. Տատրեանի :

Սոֆթան անմիջապէս հաւանեցաւ իմ պայմաններուն, և հազարումէկ 'թէմէննահներով', օրհնութիւններով մեկնեցաւ, խոստանալով որ ներկայ պիտի գտնուի որոշեալ օրերն :

Որոշեալ օրերն մի այլ բժիշկ ևս օգնական առնելով, սկսեցինք մաքրել սոփթային քթէն տանձանման միսերն, այնպէս որ սոփթան, գրեթէ կատարելապէս աղէկցաւ և սկսաւ մարմնով ևս զօրանալ : Եօթը ոսկի վճարեց նա երախտապարտ օրհնութիւններով հանդերձ և գոհունակութեամբ բաժնուեցանք ։

Հազիւ երկու ամիս անցած էր, մէկ մ'ալ օր մը այս սոփթան գազանական խրոխտ ձայնով սենեակիս մէջ նետուեցաւ և լրբօրէն սկսաւ հայհոյել ու պոռալ «Հէյ ···հէքիմի, ալլահ պէլանը վերսին, սէն պէնղի խարապ ու վիրան էթմիշսըն · տէյօրլարքի սէն պուռնումուն իչինտէն օ էթ փարչալարը քէսմէմէլիյտին · սէն պէնդիմ ճիսմի շէրիֆիմտէն էքսիլթմիշին · եա օ էթլէրի եէրինէ ղօմալը, եա օ եէտի լիրայը կէրի վերմէլիսին :»

Անմիջապէս տեսայ որ վտանգաւոր խենթի մի հետ երես առ երես կեցած էի սենեակիս մէջ · երկու ճամբայ կար ազատուելու, կամ դուրս նետուիլ յանկարծ խանի բակն և օգնութիւն կանչել և կամ անվախութեամբ միջոց մի գտնել զայն խաղաղելու ։

«Սօֆթա էֆէնտի» ըսի «էօյլէ պէտտուա լազըմ տէյիլ, հէլէ պիր քահվէ իչ տէ, քարընտաշըմ աղնամ պանա նէ իսթէր իսէն : Պէն կէնէ օ էթլէրի իստէր իսէն արմըտ կիպի պուռնունուն իչինտէն սարըմ, գասավէթ իթմէ ։»

«Պէն եօյլէ լաֆա ղանմամ, տօխտօր» կրկնեց նա, «եէտի լիրայի կէրի վերմէլիսին, սէն պէնղի ղարապ էթմիշսին, ղարապ :»

Գայլին և ոչխարին առածն է աս ըսի մտքէս, նա միտքն դրած է ստակ ետ առնել, քան թէ փտած մսի կտորներն ։

Կրկին աղաչեցի իրեն որ միւս օրն եղբայրն հետը բերէ և կարգադրութիւն մի ընենք · վերջապէս յաջողեցանք համոզել և ձգեց գնաց :

Ես այնպէս խորհեցայ թէ եղբայրը խելքը գլուխը անձ մի կերեւէր և կրնայի աւելի լաւ խօսք հասկցնել իրեն :

Միւս օրը երկուքն ալ եկան, մէկ մէկ

խահուէ հրամցունելով սկսեցի բացատրել թէ սխալ բան մի եղած չէր, հարցայ խելացի եղբօրն, «քու սիրելիներուդ հոգւոյն համար ըլլայ» ըսի, «դու կրնաս վկայել թէ եղբայրդ ինչ վիճակի մէջ էր նախ քան դինքն դարմանելը», նաև հասկցուցի որ անկարելի էր վերադարձնել որևիցէ դըրամ որ իբր վարձք ընդունած էի, «երթանք» ըսի, «ո՛ր համբաւաւոր բժիշկի որ կ՚ընտրէք, հարցնենք, եթէ սխալ բան մը ըրած եմ, այն ատեն ստակներդ կը վերադարձունեմ։»

Եղբայրն հաւանութիւն և իրաւունք կուտար խօսքերուս, բայց չարադէմ սոֆթան որոշած էր դրամ կորզել ինձմէ, ուստի սկսաւ կրկին սպառնալ թէ անհանգիստ պիտի ընէ և վնաս պիտի հասցունէ ինձ եթէ ըսածը չընեմ։ Բայց ես ալ համոզուած լինելով այս չար մարդուն պահանջին անիրաւ լինելուն, որոշած էի դրամ ետ չտալ։

«Եղբայր» պոռացի անվախութեամբ, «ինչ օրէնքի մէջ գրուած է այդպիսի պատուէր. ես այն եօթը ոսկւոյ կէսն բժիշկին եմ տուած, մէկ մասն ալ յատուկ դեղեր են գնուած, իսկ մնացեալն իմ աշխատութեան արդար վարձքն է, գիտցած ըլլաս, ըսի, եթէ տամ ալ նէ հէլալ չեմ ըներ հա՛։ Ես կը հաւատամ որ, յաւելցուցի, դիտելով որ խօսքերս կ՚ազդէին, դու հէզրէթի Մուհամմէտի բարի և հաւատարիմ հետեւողներէն մին ես, ուրեմն չե՞ս ամաչեր խնդրել այնպիսի դրամ որ հարամ է։»

Այս վերջի խօսքերս լաւ տպաւորութիւն ըսաւ սոֆթաներուն վրայ և խելօքն խրատելով խենթն քաշեց սենեակէն դուրս տարաւ, բայց ինքն ետ դալով ղիս խրատեց որ, եղբայրը խենթ էր և կրնար կրկին օր մի յանկարծակի դալ և վնաս տալ ինձ, ուստի աւելի խոհեմութիւն է ըսաւ որ բանի մի կապենք գործը։

Մի քանի օր անցած այս տեսակցութենէ, երբ խանի բակէն կ՚անցնէի դէպ ի սենեակ երթալու, խահուէճին մեծ յուզմունքով կանչեց ղիս, սա կարճ հասակով կլօրիկ խնդումերես Վանեցի մ՚էր Կիկո անունով։ «Տօխտոր էֆէնտի, տօխտոր էֆէնտի եէկուր ֆօս քիէզ պան մ՚ասելիք ունիմ ականջդիվէր։ Ինքզինքիք լաւ տավրանմիշ արէ, պսհուց մի առաջ տեսած եմ էն սոֆթայ շունն, եկած է իմ մօտ քիէզ հարցանի թէ ուր ես, ճէվապ տամ մէկ պան, ճէվապ չիտամ երկու պան, ասացի թէ դու ֆօս չես, Տինկիլթէրա էս գնացել, խաչոր հա աչքովս էլ տեսնել եմ մէկ մեծ խանչեար ղամա ծոցն էր պահած։ Աստուած հեռի արասցէ, դու իմ եաղլի միւչթարիներէս իս, ես չիեմ ուզեր քիեզ կորուսեմ, պարտք համարեցի խապար տամ։»

Գ. ԴԱՅՊԱՐԵԱՆ

(Շարունակելի)

ՄԱԶ

Մազն որ ստնաւոր կենդանեաց բովանդակ մարմինն իբրեւ զգեստ կը ծածկէ ու կը պահպանէ, մարդուն վերայ յաւէտ իբր զարդ և շնորհ կը ծառայէ։

Դժբաղդաբար այդ զարդն յաճախ կը թօթափի ի տխրութիւն վայելչասիրաց։ Ի՞նչ է մազն, ինչո՞ւ կը թափի, ի՞նչպէս պէտք է հոգ տանիլ անոր, դոցա մասին ասեմք մի քանի խօսք։

Հայերն քան զամենայն լաւ օժտեալ ցեղերէն մին են մազի կողմանէ։ Մարդախօսն ԴՈԲԻՆԱՌ (Տես իւր Anthropologie Մասն Բ. Գլ. Ժ) Հայերն կը դասէ ԻՐԱՆԵԱՆ տիպին մէջ, յորում կը թուէ Պարսկաստանի տաճիկներն, Փարսիք, Հայք, Քիւրդք, Վրացիք ևն։ Այդ տիպի բարձրագոյն բացատրութիւնն կը նկարագրէ նս լինիլ «միջահասակ, երեսն երկայն ձուաձև և դիմագծութեամբ կանոնաւոր, ճակատն բարձր և լայն, աչքն խոշոր և սեւ արտաքնունքով, քիթն ցցուած և ուղիղ երբեմն արծուաքիթ, բերանն լայն, շրթունքն բարակ, գոյնն բաց և կարմրագեղ, մազերն առատ բովանդակ մարմնոյն վերայ, հերքն ուղղորդ և սեաւ, մօրուքն և ընչացքն ևս սեաւ, երկայն, խիտ և լաւ զետեղուած։»

Մազերն ամեն ազգի և ցեղի, ի հընումն և այժմ, խնամքի և հոգածութեան առարկայ եղած են։ Պատմաբանք և վիպասանք փոյթ ունին իրենց դիւցազանց հերային հանգամանքն ալ յիշելու։ Հայկ, կ՚ասէ Խորենացին, քաջագանգուր էր, այսինքն դլխու և մորուաց մազերն ոլորուն, գռուզ էին։ Այժմ իսկ եւրոպացի

կինն իւր ուղղորդ մազերն խոպոպեօք կը վայելչացունէ յատուկ գործեաւ։ Թողուլ որ գեռատի տղայոց հերքն երկննան և իբրեւ շնորհագեղ գէս ծածանին ու տարածին ուսոցն վերայ՝ ոչ միայն Հայու սովորութիւն է, այլ և մանաւանդ եւրոպացւոց, որք գեռահաս օրիորդներու մազերըն աւելի երկար ատեն իբրեւ գէս կը պահեն, մինչ առ մեզ ծամի վերածուած կը լինի։ Ծամն երկնցուցանելու համար ծայրերէն կապարէ գնդիկներ կախել ևս շատ տեղ սովորութիւն է առ մեզ, և արդարև կ'օգնէ ալ, որպէս Սափէյ Ֆռանսացի կաղմախօսն կը հաստատէ (Տես Anatomie գ. հատոր, երես 642) թէ մազերն մեղմ և ասպիճանաբար ձգման ենթարկուելով կ'երկննան մէկ հինգերորդ կամ մէկ չորրորդն իրենց առաջին երկայնութեան։»

Ուրեմն ծամերու երկայնութիւնն գընահատուած է մեր մէջ, բայց մանաւանդ աղջկանց համար, մինչ տղոց մազերն ընդհանրապէս փոքրել և մինչև իսկ կընտել սովոր են ի դիւրութիւն մաքրութեան։ Այդ բարբարոս սովորութեան վերջ տալ պէտք է, և մանկտին կանուխէն վարժել իրենց մազերն սանտրելու և մաքուր պահելու։

Մազերու մեծ թշնամին անմաքրութիւնն է։ Օդէն, ջրէն, աղտոտ դրացիէն, փողոցի փոշիէն կրնայ դիպուածով մազերուն մէջ մուտ գտնել հերակեր մանրէ (միքրոպ), կամ ուրիշ մորթային ախտերու ծնիչ մանրացուցական ճճի, որ եթէ մաքրասէր մէկուն պատահի, շուտով կը մաքրուի ի բաց, իսկ եթէ անկիրթ և աղտեղի գլխու վերայ իյնայ, իբրեւ նպաստաւոր հողի վերայ կը հաստատուի, կը բազմանայ և գոնջութիւն (քէլ), կամ ուրիշ ախտ յառաջ կը բերէ, որոց հետեւութեամբ մազերն ըստ մասին կամ բոլորովին կը թափին։

Մազերն մաքրելու համար պարզապէս ջուր և աճառ (սապոն) բաւական են։ Սանտրելն և վրձինելն ևս ազդու միջոցք են մազերն մաքուր և առողջ պահելու։

Սմեն առաւօտ գլխուն վերայ քիչ մի պաղ ջուր լնուլ, ապա ցամքեցուցանել և սանտրել, ըստ իս, շատ առողջարար է գլխու մորթին և հերաց, թէև ասոր հակառակ կարծիքն ունեցող բժիշկներ տկը գտնուին։

Տեսակ մի մանրէ կայ որ գլխու մազերն կը ջարդէ հետ զհետէ ընդարձակուող շրջանի մի մէջ։ Մորթն բոլորովին կունդ կը դառնայ այնտեղ։ Ատոր համար ազդու դարման կայ որով նախ աղուամազ (բարակ, դեղին, աչքի չտեսնուող մազ) կը բուսնի կունդ մասին վերայ, որ ապա կամաց կամաց սովորական մազի կը շրջափոխի։

Կայ նաև համեմատական կնդութիւն, որ ոչ թէ բոլոր մազերուն թափիլն է, այլ ցանցառանալն առ հասարակ, որ եթէ երկար ատեն շարունակէ, բացարձակ կնդութեան կը յանգի՝ նախ գագաթին վերայ, ուրկէ հետ զհետէ ընդարձակուելով կը տարածուի դէպ յառաջ և քովերն։

Մազերուն ցանցառմամբ ջնջուելուն բուն պատճառն պէտք է փնտռել ամբողջ մարմնոյն մէջ։ Ընդհանուր տկարութեան արդիւնքներէն մին է այն։ Ծանր ջերմերու, ժանտատենդի (թիֆոյ) նման հիւանդութեանց ատեն կրնան հերք թափիլ։ Նոյնպէս սիֆիլիսն հերաթափութիւն պատճառող ախտ մ'է։ Արիւնն է որ կը թունաւորի այսպիսի ծանր ախտերու պատճառաւ և մորթին ու մազերուն սննդեան կը վնասէ։ Ուրիշ թոյն մ'ալ ՀՈԳՆ է, որ բոլոր մարմնոյն, մարսողութեան, ջղերուն, արեան, երակներուն և հետևապէս մազերուն կազդէ չարաչար։ Կը պատահի որ միքանի շաբթու, մէկ աւուր մէջ իսկ, մարդուն մազերն սպիտականան ծանր հոգի պատճառաւ։

Այս դիտողութիւններէն կը տեսնուի թէ մազերու լաւ պահպանումն մեծ կախումն ունի ընդհանուր առողջութեան որպիսութենէն, և մարդուն զբաղմունքէն, խառնուածէն ու բնաւորութենէն։ Ինչ որ ընդհանուր առողջութեան վնասակար է, մազերուն ևս աննպաստ է։ Տքնութիւնը, հոգն, սեռական չափազանցութիւնք, արեան թունաւորմունք, անմաքրութիւն, թշնամի են կենաց և հետեւապէս մազերուն։

Կնդութեան, մանաւանդ համեմատական կնդութեան, երկու դարման միանգամայն պէտք է անէ բժիշկն։ Պարտի դրսէն ինչ ինչ դեղեր գործածելով գլխու մորթն գրգռել մեղմով և սնանելուն օգնել։ Պարտի նաև ներսէն տալ զօրացուցիչ դեղեր և այնպիսի մի քանի նիւթեր որք մանաւորապէս զօրացուցիչ և սնուցիչ ճանչուած են մազերուն։

ԱՐԱՔՍ

ԱՐԱՔՍ գրական և գեղարուեստական պատկերազարդ Հանդիսի 1893 թուականին Բ. գիրքն հրատարակուեցաւ հետեւեալ բովանդակութեամբ.

Ռուբինեան հարստութեան անկման հինգհարիւրամեակի առթիւ (Ս. Գուլամիրեանց). — Սգաւոր Կիլիկիա (Օշին). — Մի քանի խօսք Ջաւախք Գաւառի մասին. — Ս. Մեսրոպ Թարգմանչի եկեղեցին. — Ս. Թովմայ Առաքելոց վանքը. — Երա՞զ թէ ճշգրիտ (Պ. Պոլեանց): ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. Քայր-Եղբայր. — Հայ ժողովրդական առասպել. — Ժողովրդական մօտիւ. — Ես ուզեցի ծաղիկներով. — Ծանր թախիծ պատեց հոգուս: ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ Տէր Խորէն արք. Նար Պէյ, Բ., գրական մարդը. — Տիկին Սաթենիկ Զմշկեան. — Ցիշատակարան մեռեալ տանից. — Թրքահայ գրականութիւնը 1893ին. — Նորին վեհ. Տ. Տ. Մկրտիչ Ա. անդրանիկ կոնդակը. — Այս գրքի նկարների մասին:

«Արաքսի» Այս գիրքն կը պարունակէ Խրիմեան Հայրիկի պատկերէն զատ ուրիշ 20 պատկերներ ևս:

«Մի կարգ յօդուածներ որոնք նշանակուած էին այս գրքի համար, այժմ, այլ և այլ ծանրակշիռ պատճառներով դուրս մնացին այս գրքից:»

«Արաքս» կը ծանուցանէ նաև թէ ռուսական նոր օրէնք մի կ'արգելու հասարակ կամ ապահովագրուած նամակի ծոցով ռուսատան ուղարկել ռուսական թղթադրամ. Ուրեմն Ամերիկայէն կարելի է յղել ամերիկեան տոլար թղթադրամ կամ փոխանակագիր:

«Արաքսի» բաժանորդագինն է Ամերիկայի համար երկու տոլար:

Հասցէն պէտք է դրել ճիշդ սապէս.
Monsieur Simeon Goulamirianzt
RUSSIE St. Petersbourg

«Արաքս»ն Ամերիկայի մէջ ունի գործակալ, որոյ միջոցաւ ևս կրնան դիւրաւ բաժանորդ գրուիլ փափաքողք, այն է Տիար Պ. Յ. Ազարեան. College Point, N. Y.

ՆԱՄԱԿ ՊՈՍԹՈՆԷՆ

Պոսթոն, Մայիս 24, 1894

Խմբագիր Տէր,
UNITED FRIENDS OF ARMENIA,

Միացեալ Բարեկամք Հայաստանի ընկերութիւնն իւր երկրորդ հրապարակային նիստը ունեցաւ Մայիս 24ի երեկոյին ընդ նախագահութեամբ Տիկին Ճուլիա Ուօրտ Հօվու:

Տիկին Հօվու, այս ծերունի և անուանի կինն խօսք առաւ և ըսաւ, «կ'արժէ արդարեւ տեսնել ձեր ճգանք պահպանելու համար հին քաղաքակրթութիւնն թրքաց բարբարոսութեան հանդէպ: Մենք՝ Ամերիկացիներս պէտք է ջանանք Ամերիկեան կառավարութեան դիւանագիտական ազդեցութիւնն ներմուծել ի Թուրքիա Հայաստանի անկախութիւնն ապահովելու համար. որովհետեւ դիւանագիտութիւն այն մեսաքսէ ուռկանն է որոյ մէջ շատ մը ազդեր կը բռնուին և շատեր ալ կ'ընդլայնին:

Մենք լաւ գիտենք թէ երկաթը դեղերու մէջ մեծ դեր կը կատարէ, միթէ չե՞նք կրնար քանի մի երկաթէ դեղահատեր ղրկել այդ հիւանդ մարդն բժշկելու համար, որ կարող ըլլայ ինքզինք ճանաչելու:»

Երկրորդ խօսողն էր Տիար Կ. Ֆ. Փափազեան, որ քանի մը վկայութիւններ բերաւ Բրոֆէսոր Պրայսի և Նորմէնի գրութիւններէն, թէ որ աստիճան բարբարոսութիւնք ի գործ կը դրուին Հայաստանի մէջ մահնաւորապէս քրիստոնէից վրայ:

Երրորդ խօսողն է Տօքթ. Հէնրի Պըլէքուէլ, այս ծերունին խօսեցաւ երիտասարդի մ'աւիւնով և ըսաւ, «Ամերիկայ օգնեց դար առաջ Ալճերիոյ, յետոյ օգնեց Յունաստանի, հուսկ յետոյ Պուլկարիոյ, դեռ զոհեր կան Թուրքի ճիրաններուն մէջ զորս քաղաքակիրթ ազգաց պարտքն է ազատել, և ահա այդ զոհերէն մին է Հայաստան, թող դարձնենք Ամերիկայի հասարակութեան ուշադրութիւնը դէպ Հայկական խնդիրն և հրաւէր կարդանք Եւրոպիոյ հասարակաց և այսպէս ստիպենք մեր կառավարութիւնք որ իրենց ազդեցութիւն բանեցուցեն Հայկական Խնդրոյն նկատմամբ:»

Չորրորդ խօսողն էր Օր. Ալիս Սթօն Պլէքուէլ, WOMENS JOURNALի խմբագիրն, որ ըսաւ, «թէ ինք կը հաւատայ որ Թուրք կառավարութիւնն ամեն միջոցներ ձեռք առած է Հայերն և Հայկական խնդիրն ոչնչացուցնել. երբ, ըսաւ, անցեալ տարի Վօշինկթօն էի, մասնաւոր ուշադրութեամբ դիտեցի թէ որպիսի խարդախ միջոցներու կը դիմէ Թրքաց դեսպանն Ամերիկեան մամլոյ միջոցաւ հաւատացնել թէ Հայաստան ամեն ազատութիւն կը վայելէ, և բոլոր գրուածներն երկրէն արտաքսեալ մարդոց գաղափարն է:»

ԱՐԳՈՍ

ՀԱՅ ԳՈՐԾԻՒՐՆԵՐ

ՁԱՐԱՁԱՐ ԿԸ ՀԱՂԱԾՈՒՆ 2,000Է ԲԱՂԿԱՑԱԾ ԱՄԲՈԽԷ ՄԻ Ի ՍԹՈՆՀԷՄ

Այս քանի՞երորդ անգամն է որ ՀԱՅՔՈՒՄ կը հրատարակեմք այս կարգի ողբալի դէպքեր։ Մինչև ե՞րբ մեր հայրենակիցներուն մէջ պիտի գտնուին այնպիսիներ որք չուզեն հասկանալ թէ անպատուութիւն և անօգուտ յանդգնութիւն է երթալ գործադուլ անող գործաւորական միութեանց տեղն լեցուցանել։

Պոսթընի Տէյլի Կլոպ թերթն բաւական անհաճոյ թէև ճիշդ տեղեկագրութիւն մի կուտայ Մայիս 8ի դէպքին վերայ, որոյ հետեւութեամբ 7 Հայեր բանտարկուեցան։ 17 Հայեր Մէն և Ընկ·ի կօշկի գործարանին մէջ գործել սկսած էին իբրեւ գործագող։ Երկու կամ երեքական եկած էին հետ զհետէ որպէս զի մարդ չտեսնէր, բայց գործադլաւորք իմացած էին առաջին եկողին գործելու ըսկսած վայրկեանէն։ Բչ· Երեկոյ, հմայիւք իմն, իբր 2,000 հոգի ժողոված էր այն հրապարակին վերայ ուրկէ այդ Հայեր կառք պիտի նստէին գործարանէն վերադառնալու ատեն։ Երբ Հայերն դուրս ելան գործարանէն, ժամ 6ին, նոցա ընդ առաջ գնաց Պատ·Զիթճեան և յորդորեց որ անցնին երթան որպէս զի նեղութեան չհանդիպին· բայց նոքա չանսացին բնաւ և յառաջացան դէպի հրապարակն։ Ամբոխը մրջիւնի բազմութեան նման ելաւ ծածկեց փութով կառքն և Հայերուն տեղ չթողուց։ Խոշոր մէկ Հայ մի, լախտ ի ձեռին, յաջողեցաւ կառքին վերայ ելնել, և թէպէտ շատ հրեցին զինքն ձգելու, նա ամուր բռնած կեցաւ։ Կառքն սկսաւ ընթանալ։ Հայերու մնացեալքն և 2,000ի ամբոխն կը հետևէին կառքին· արք, կանայք, մանկունք խառն էին· տղայ մի խոշոր Հայուն ոտքէն քաշելով կառքէն վար ձըգեց։ Երբ Հայն ոտքի կանգնեցաւ, վերարկուին տակէն երկայն սուր դանակ մի հանեց և չողչողացոյց օդին մէջ։ Ամբոխն ետ քաշուեցաւ։ խոշոր մարդն ամբոխին մէջ մէկուն վերայ դիմեց և անցնելու ատենն տղու մը դպաւ, բայց չյաջողեցաւ մարդուն հասնելու վասն զի քար մի կերաւ գլխուն։ Այս անկարողացոյց զինքն և դանակն ձեռքէն ինկաւ։ Միւս Հայերն տեսնելով իրենց ընկերին վիճակն, դուրս հանեցին իրենց զէնքերն, դանակներն ու լախտերն, սակայն պատեհութիւն չունեցան գայնս գործածելու։ 4 ոստիկաններ ներկայ էին, բայց 50 ալ լինէին, չէին կրնար այդքան բաղմութիւն հանդարտել։

Հայերն վազեցին փողոցն ի վար, և խուժանն զհետ անդեցաւ։ Հայերու մին կրպակ մի ապաստանեցաւ և թաքչիլ փորձեց, բայց ոստիկաններն բռնեցին զինքն ու տարին ի բաց։ Ուրիշ երկուք ևս բռնուեցան։ Ամբոխն անխոնջ կը հալածէր միւսներն, և թէպէտ երկու երեք հոգի ևս բռնեցին, մնացեալք փախան զերծան քաղաքէն դուրս։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Հայկական Միութիւնն կը շարունակէ իւր կանոնաւոր նիստերն ամեն ամսոյ երկրորդ և չորրորդ շաբաթ երեկոյներն։ Թանգարանական Միութեան և Հայկականին ի մի ձուլման խնդրոյն վիճաբանութեան քուէարկութեամբ վերջ տուաւ Թանգարանականն՝ տեսնելով որ առ այժմ չի կրնար լուծուիլ։

—Տիար Թոփաքեան, Նիւ Եորքի հայ գորգավաճառներէն մին, որ Շիքակոյի ցուցահանդէսին մէջ պարսկական գորգերու պաշտօնական ցուցադիր կարգուած էր, վերջերս ամբաստանուած էր իբր թէ Նիւ Եորքի մէջ և այլ տեղեր ապրանք վաճառած է թիւր ներկայացմամբ, մինչեւ անգամ ամերիկեան վաճառքներ իբրեւ արեւելեան վաճառելով։ Վայրկենական ձերբակալում մի տեղի ունեցած էր այս ամբաստանութեան պատճառաւ։ Նիւ Եորք Թրիպիուն թերթին մէջ յօդուած մի այս ամենուն բացատրութիւնն լիովին կուտայ, ցուցնելով թէ վաճառականք ոմանք Տիար Թոփաքեանի յաջողութեան վերայ նախանձելով յերիւրած են այդ զրպարտութիւններ, և ի մէջ կը բերէ նշանաւոր վաճառատներու պատուաբեր վկայութիւններն և պարսկական կառավարութեան յանձնակատար Վսեմ·Իսկէնտէր Պէյ Գարոյեանցի և Վսեմ· Արշակ Խան Գարոյանցի պաշտօնական յայտարարութիւնն ի նը պաստ Տիար Թոփաքեանի, վերջապէս նա և ցուցահանդէսին ընդհանուր տնօրինին,

Տիար Ծօրճ Տէյվիսի, պաշտօնական նամակն որով Տիար Թոփաքեանի պարսկական ցուցադրութիւնն կը գովէ իբրեւ յոյժ պատուական և յոյժ գոհացուցիչ:

—Նիւ Եորքի պատ. ազգայիններէն Մեծ. Տեարք Յ. Մ. Հայկունի, Գ. Յակոբեան, Մ. Գ. Տատրեան (Տր.), Գ. Գասպարեան և Ա. Իշխանեան (Տր.) Մայիս 5 թուականաւ շրջաբերական նամակ ուղղեցին առ համակրողս «Հայք»ի և նոցա նպաստն խնդրեցին յօգուտ սոյն թերթի հրատարակութեան:

—Քաղաքիս մէջ, ինչպէս ամեն կողմ, գործերն շատ վատ են դեռ, և մեր պանդուխտ ազգայնոց մեծագոյն մասն տակաւին անգործ և նեղ վիճակի մէջ է:

—Պատ. Աբրահամ Յովհաննէսեան կը բաղձայ ծանուցանել թէ Ս. Բարթուղիմէոսի Մատրան մէջ, ի 42դ փողոց թիւ 209, ամեն կիրակի կէսօրէն յետոյ ժամ 3ին Ամերիկացի օրիորդներու ուսուցչութեամբ անգլիերէն դաս կը տրուի փափաքողաց և ժամ 4ին կրօնական պաշտամունք տեղի կ'ունենայ հայերէն լեզուաւ:

—Մայիս 19ին Նիւ Եորքի մէջ Հայոց ընդհանուր ժողով մ'եղաւ ի նպաստ ՀԱՅՔի հանգանակութիւն ընելու համար: Մեծ. Տիար Հայկունի նախագահեց և Մեծ. Տեարք Տր. Տատրեան, Գ. Գասպարեան և նախագահն ատենախօսեցին: Տր. Իշխանեան կիթառ նուագեց երկիցս, և Ամերիկացի Տիար Հուայթ առոգանն մի կտոր առոգանեց անգղիերէն լեզուաւ: Տիար Գասպարեանի երկասիրութիւնն հրահանգիչ և զբօսալի լինելով կը հրատարակուի ՀԱՅՔի մէջ:

Այդ ժողովոյ ներկայ գտնուող մեր գործաւոր հայրենակիցներու առատաձեռն և անձնուէր հանգանակութիւնն, նկատելով ժամանակին սաստիկ նեղութիւնն, սքանչացեալ գովասանութեամբ ընդունեցաւ առ հասարակ:

—Տր. Տատրեան դատ բացեր է ընդդէմ Տր. Թէոտորեանի ամբաստանելով զնա թէ իրաւունք չունի մածունն իբրեւ դեղային ըմպելիք շիշերու մէջ դրած վաճառելու՝ զի ինքն է նախ խորհեր և ի գործ դրեր այդ գաղափար և մեծ զոհողութեամբք և ճգամբք ծանօթացուցեր է զմածունն՝ Տատրեանի անուան տակ՝ Ամերիկայի բժշկաց և ժողովրդին: Տր. Թէոտորեան ինքզինք կը պաշտպանէ ասելով թէ մածունն արեւելքի մէջ հանրածանօթ նիւթ մ'է և ուստի ոչ ոք իրաւունք ունի զայն մենավաճառութեան առարկայ ընելու: Տեսնենք դատն ինչ ելք կ'ունենայ:

—Նիւ Եորքի Ֆիլարմէնիք Յանձնախումբըն որ լոնտոնեան Արմէնիի տարեկան 800 տոլար նպաստ հայթայթելու յանձնառութիւն արած է, այս տարի իւր երկրորդ տարեկան երեկոյթէն չկրցաւ այնքան հասոյթ ընդունիլ որքան առաջին տարին, բայց կաշխատի գումարն որոշ քանակութեան հասցունել ամենայն ջանիւք:

—Միացեալ Նահանգաց Հայերն այժմ երկու վարդապետներու ներկայութիւնն կը վայելեն, զի նոր առաջնորդ Հայր Տէրունեանի ժամանած լինելէն յետոյ ամիսներ անցան և նախորդն Հայր Սարաճեան չմեկնեցաւ ուրիշ տեղ հովուութեան պաշտօն վարելու:

—Թոմսըն անուն Ամերիկացի ուղեւոր մի Կ. Պոլսէն վերադարձած լինելով այս օրեր, քաղաքիս լրագիրներ նորա մասին գրած են, ի մէջ այլոց Սըն օրաթերթն որ հետեւեալ խորագիրն կը դնէ իւր յօդուածին վերայ.— «Նա ճանապարհորդեց մինչեւ Թուրքիա ի նուիրել Աբտ Իւլ-Համիտի իւր գրքէն օրինակ մի, սակայն անձնական ունկնդրութիւն զլացուեցաւ նմա՝ արքայական քիթն ուռած լինելով:»

Սուլթանն այլապէս մխիթարեր է զուղեւորն՝ Օսմանիյէի շքանշան շնորհելով նմա, և այսպէս շողոքորթեալ ամերիկացին շահմն հանդերձ ի հաշիւ Սուլթանին կը շռայլէ հետեւեալ գովեստներն—

«Նա լաւագոյն ու քան զամենայն խելացին է բոլոր Սուլթանաց որ երբէք կառավարած է Օսմանեան կայսրութիւնն, և (լաւ ուշադրութիւն արէք) քան զամենայն կարողն Եւրոպիոյ բոլոր ներկայ վեհապետաց...: Ապաքէն չարադէտ օր մի պիտի լինէր Թուրքիոյ համար եթէ վեհապետին բան մի պատահելու լինէր. քանզի նորա իշխանութիւնն արդար և բարեխոհ է առ ամենայն ցեղս և կրօնս որոց վերայ կը թագաւորէ:»

Մեր ընթերցողաց արդար դատաստանին կը յանձնեմք զթանթուշն Թոմսըն:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Երկրաշարժ Ռուսական Հայաստանի մէջ:

Օտէսայէն Մայիս 16ին կը հեռագրեն — Կարս և ուրիշ շատ քաղաքներ ի կովկասեան գաւառս սաստիկ երկրաշարժով ցնցուեցան:

—Ցափանց Եփրատայ կը գրեն մեզ։—

Սղութիւնն ու խեղճութիւնն կը շարունակէ։ Հացագին չունեցողք խիստ բազում են և կը սպասեն որ խոտերն բուսնին որպէս զի Ֆիւրդեր գարիի ծախսէն ազատելով՝ աւելի իրենց ցորենէն ծախեն։

Երբ պտուղներն և բանջարեղէնք ժամնեն, խեղճ ժողովուրդի վիճակը քիչ մի պիտի ամոքի, վասն զի չատեր գոհ պիտի լինին պտուղ և բանջար ուտելով։

—Մանուկներու դաստիարակութիւնն արդէն ստիպողական էր Նիւ Եորք Նահանգի օրէնքով. այդ օրէնքն աւելի կատարելագործուեցաւ այժմ Նահանգին օրէնսդրական երկու ճիւղերուն մէջ ևս քուէարկուելով նոր առաջարկ մի որով ամեն տղայ պարտաւոր է ութ տարեկանէն ցտասնեվեց տարեկան հասակն դպրոց յաճախել, և տասներկու տարեկանէն վար եղող ամեն տղու կ'արգիլուի կանոնաւոր գործաւորութիւն։

Այս օրինօք Նիւ Եորք Նահանգն յառաջ կանցնի քան Զուիցերիա անգամ ուր դպրոցական ստիպիչ հասակն 14 տարեկանն է։

—Այժմ յէջմիածին մամլոյ տակ է Աստուաշունչ գրոց նոր տպագրութիւն մի գրաբար և աշխարհաբար դիմացէ դիմաց։

—Ըստ Ռուսական նոր օրինաց, ռուսական հպատակ մի օտար տէրութեան հըպատակ լինելէ յետոյ եթէ վերադառնայ ի Ռուսիա, պիտի վայելէ այն ամեն իրաւունքներն զորս ուրիշ օտարականներ ունին։ Հրէայք չպիտի կրնան ռուսական քաղաքացութիւն ստանալ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

Ի Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԷ

«Հայք»էն ինչ ինչ փոփոխութեամբք հանուած այս ուսումնասիրութիւնն կը ծախուի 10 սենթի։ Հինգ օրինակի գին կանխիկ վճարողն 10 օրինակ կը ստանայ այսինքն հինգ օրինակ ալ ձրի։

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԲԱՐՔ

Յ. ԷԿԻԶԵԱՆ

EKIZIAN BROTHGRS

30 Eddy St. Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ա՛լ աւելի զոհողութիւններ անեմք։

Անոնք որ կը կարօտին ստակի փոխադրութիւններ անել՝ դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբն կարգադրած ենք որ թէ մեր անձնական տուներու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք գոհացուցիչ գներով։

Այս նկատմամբ մեր հասցէին գրուած նամակներու մասնաւոր ուշադրութիւն անելով անմիջապէս պիտի պատասխանենք։

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E:(Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27դ և 28դ փողոցաց միջև



191 FRONT Փողոց, Worcester, MASS.

Ստեփան Փ. Բրուտեանս, պատիւ ունիմ ծանուցանելու իմին ազգայիններուս թէ առանձինն խանութ մուծեցած եմ քանի մը շաբաթներէ ի վեր և կը պահեմ ամեն տեսակ ժամացոյցներ ղուտ ոսկի, ոսկեզօծ և արծաթ. նաև ամեն տեսակ ոսկեզօծ շղթաներ և ոսկի մատանիներ և որ ըստ կարգին. նաև ամեն կարգի խոշոր ժամացոյցներ թէ պատի և թէ բաֆիյարմար մօտս կը գտնուին, և կը վստահացուցնեմ թէ խիստ չափաւոր գներով կըրնամ վաճառել: Ազգայնոցս մասնաւոր զեղչ կ'ընեմ որևէ ապրանաց համար որք մօտս կը գտնուին.

Նաև ամեն տեսակ ժամացոյցներ թէ ամերիկական և թէ եւրոպական կը նորոգեմ խիստ չափաւոր գներով և լաւագոյն կերպով և կերաշխաւորեմ մէկ տարի:

ՍՏԵՓԱՆ Փ. ԲՐՈՒՏԵԱՆ

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անուանն ալ Հայերէն գրելով: Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր:

«ՄԱՐՁԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բաղում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցուցնելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն: Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ճգտմանց շրջափոխութիւնն:

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք:

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 189[illegible], գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ